



## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՐՊԻՄՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՏՍԹԵՎԱՑԻՑԻ \*

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒԽԵՈՒԹՅՈՒՆԸ

րիգոր Տաթևացին ժե դարու ամենանշանավոր եկեղեցական գործիչն ու մատենագիրն է: Իո անոնք լրացուցիչ ու անբաժան մասն է Որոտնեցիին ու Տաթևի դպրոցին: Դպրոցի ուսումն ու ժողովրդականությունը կմեծնան շնորհիվ իրեն Ավանդապահ, գործունյա խորագիր ուսուցիչն է՝ որ «ի գիշերի խոկմամբ զիմաստ գրոց հաւաքէր, և տուրնչեան աշակերտացն պատմէր», — կգրի Առաքել Սյունեցի. «ընթերցման է պարապող, աշակերտաց է մարզող... ծածուկ բանից բացատրող»: Որոտնեցիի ամենատաղանդավոր աշակերտներեն մեկն էր Գրիգոր Տաթևացին, որ իր ուսուցչի կենդանությանն իսկ եղավ Տաթևի համալսարանի ամբիոնին վարիչը և առավել ևս բարձրացուց դպրոցին փառքն ու անոնք:

Կենսագրականը. — Գրիգոր Տաթևացին ծնած է 1346 թվականին Վայոց Զորի մեջ: Հայոց՝ Սարգիս, արքիշեցի, իսկ մայրը փար-

պեցի էր, որոնք ասպատակութենե փախչելով եկած հաստատված էին Վայոց Զորի մեջ, ուր ծնալ և ութլուշահ: Յոթնամյա ուսում ստանալե վերջ տասնհինգ տարեկան էր, երբ Տիղիսի մեջ հանդիպեցավ Որոտնեցիին, որուն աշակերտեցավ քանութը երկար տարիներ: Ամեն տեղ հետևեցավ իր ուսուցչին, միշտ անոր ներբողը հյուաելով,

Հովհաննես Որոտնեցի իր աշակերտին՝ Գրիգոր Տաթևացիի հետ անօրեն կեղեթիչներու ձեռքեն փախստական, կուգա Դարանաղի Սեպուհ լեռան Ս. Գրիգոր Լուսավորչի հանգստարանը, խոր ծործորի մը մեջ, ուր շինված էր նաև ձեռակերտ փայտյա փոքրիկ մատուռ մը և հոն ապահով զգալով, մնացին որոշ շրջան մը: Գրիգոր Դարանաղի կգրե. «Եւ զԳրիգոր Տաթևացին՝ զկուսաւորին Սստուածաշունը Գրոց և զլուծիչն արտաքնոց, որ մինչև յայնմ ժամանակին ղեռ աւագ սարկաւագ եղեր և անդ ի դամբարանի Սրբոյն Գրիգորի ձեռնադրելով քահանայ և առնեով զաւազան իշխանական վարդապետութեան ի միում աւուր»<sup>1</sup>:

\* Հաճույքով հրատարակում ենք Կիլիկյան օրինապահ միաբանության երիտասարդ և խոստումնալից Հոգևորականներից Տ. Գևորգ վարդապետ Կարպիսյանի «Տաթևյան դպրոցի վերը հայ մշակույթի վարամության մեջ և Գրիգոր Տաթևացին» վարդապետական ավարտածություն մի դրույթ: — ԽՄԲ.:

<sup>1</sup> Գրիգոր վարդապետ Կափախեցի կամ Դարանաղի, երասագեմ, 1915, էջ 399: (Ըստ ուսուցչի Գրիգոր Տաթևացիի քահանա կձեռնադրվի Երուսաղեմի մեջ 1373-ին, ինչ որ անհավանական կթվի ըլլալ):

Իր կյանքին մեծ մասը անցուցած է Տաթևի մեջ, Հոն աշակերտած է ու պաշտոնավարած, ուսկից ստացած է Տաթևացի Հորչորջումը։ Իր մասին ամբողջական կենսագրական մը գոյություն չուներ։ Միայն վերջերս կը ունի հաշիկանի պրատուլմերուն շնորհիվ, Երևանի մատենադարանի թիվ 6607 ձեռագրի 5ա և 6ա էջերեն հայտնաբերվեցավ Գրիգոր Տարեցիի համառոտ կենսագրությունը, զոր կմեջքերենք ամբողջությամբ։

«Ի սմին աւուր՝ ի դեկտեմբերի իէ (27), ննջումն ի հանգիստ երիցս երանեալ քաջ բարունապետին Գրիգորի, աշակերտի Յովեաննու Որոտնեցոյ։»

Սքանչելի այս Աստուծոյ էր ազգաւ Հայկագնի, աշխարհաւ Կրկնակի՝ ի հայրենական տոհմէ Քաջքերումի և մայրենական ցեղն Այրարատ գաւառէ, ի գեղաւանէն Փարպոյ։ Ծնեալ յաշխարհին Վրաց, ի յամուրն Թուք, և սնեալ ի ձեռն հարազատ եղբօրն՝ ի տան թագաւորին Դավիթի, Եւ էր մանուկ գեղեցկատիպ, և ուշիմ, և լի Հոգոյն պարգևօք, Եւ յորժամ կամեցաւ մեծ փիլիսոփայն հայոց Յովհաննես Որոտնեցին գնալ յԵրուսաղէմ՝ յԵրկրապատկին սուրբ տեղեացն, ետես զմանուկն Գրիգոր յառաջադէմ յամենայն ուսմունս, էտո առ ինքն, և արար ըստ հոգոյ որդի, և սնոյց ի բարին, և ուսոյց զամենայն իմաստու աստուածային գորոց և արտաքին սովիստից, Եւ տարեալ ի հանգիստ դամբարանի Սուրբ Լուատորչին, ի Սեպուհ լեռուն և ետ ձեռնադրել սարկաւագ, և յանուն Լուսատորչին կոչեցաւ Գրիգոր (Նրա մկրտութեան անունը եղել է Խովլուզահ— լ. Խ.), և անուամբ և իրօք ելից զտեղի նորա՝ լուսատրելով իմաստութեան լուսովն զազգս Հայոց։ Եւ տարեալ յԵրուսաղէմ արար քահանայ, և դարձեալ բերեալ առ գերեզմանն Սուրբ Լուսատորչին՝ արար վարդապետ՝ աղ համեմիլ և լոյս լուսատորիլ տանն Աստուծոյ, և բերեալ յաշխարհն Սիհնեաց, և զկնի մահուան իւր ետ հրաման նստել յաթոռ մեծ համալսարանին նսայեայ և բարունապետ Հայոց Մեծաց։

Եւ մեծարեցաւ և պատուեցաւ ի մեծ աշխարհակալէն Թամուրէն, և յորդոյ նորին Միրանշայէն։ և պատուեցաւ ազգս Հայոց յայլասեռիցն վասն ախորժ և իմաստայեղծ բանից վեհին Գրիգորի։ Այլ և արար գիրս յոգնիմաստք ընդդէմ ամենայն ազգաց, ճշմարիտ ցուցանելով զհայք, և արար բանս խրատականս, և իմաստ, և հանճարս, և իմաստնացոյց զազգս Հայոց քան զամենայն ազգս, և ուղղեաց զկարգս և զսահմանս Եկեղեցոյ։ Եւ էր անդադար յընթերցումն և ի գրել աստուածային իմաստից, և անձանձիր ի յաղօթս և անպարապ ի ծնրադրութիւնս,

աղքատասէր և օտարասէր. առաւ ի տուրս աղքատաց, խարազնազգեստ մարմնով և խոնարհ հոգւով և ծննդական մտօքն. հասկաւ երկայն, դիմօք պայծառ, տեսակ արժանի գոռոզութեանն, հերօք խարտեաշ, մուրօք առատ, միշտ պահեցող, յոյժ արտասուեղ, պատուղ տօնից, սիրող սրբոցն և բանից [նոցա]: Հանգեաւ երանելի մահուամբ ի վանքն Տաթևոյ ի դեկտեմբերի իէ (27), և թաղեցաւ ի տօնի մեծ առաքելոցն Պետրոսի և Պողոսի, և եղկ դասակից և պատուակից նորին, ի թուին ՊՇԸ (1409). ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, օրհնելոյն յափտեանս, ամէն. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, ամէնք<sup>2</sup>:

Գրիգոր Տաթևացիի կյանքի ու գործունեության առանձին դրվագներու ուսումնասիրության, ինչպես նաև մահվան թվականի ու ամսաթվի համար շատ մեծ արժեք կներկայացնե վերոհիշյալ համառոտ կենսագրականը։ Աղկե ի հայտ կուգա, որ իր ավազանի անունը եղած է Խովլուզահ։ Եվ թի Հովհաննես Որոտնեցին մասնավոր աշխատանք տարած է իրեն համար՝ աստվածային գիրքերու և օտար իմաստասերներու գրվածքներուն իմաստները պարզաբանելով։ Իր հետ տարած է Երուաղեմ ու անկե գացած են Դարանաղ և սարկավագ ձեռնադրված է Սեպուհ լեռան Ս. Լուավորչի դամբարանին մեջ, ապա քահանա, և հանուն Լուսավորչի վերակոչված է Գրիգոր։

Խովլուզահ, քանի մը վաղամեռիկ զավակներե ետք, ովստի զավակ եղած է։

Ասկե առաջ հիշեցինք, որ 15 տարեկանին, այսինքն 1361-ին, կհանդիպի Հովհան Որոտնեցիին, Տփղիսի մեջ, ու անոր կաշակերտի։

1373-ին իր մեծահոչակ ուսուցչին հետ կերթա Երուաղեմիմ։

Վարդապետական գավազանի իշխանությունը կստանա Երզնկայի մեջ, իսկ ծայրագունությունը՝ 1387-ին Ապրակունիսի մեջ, իր ուսուցչին Հովհան Որոտնեցի իր վախճանումն առաջ, 1388-ին, ոկոչեաց զմեծ վարդապետն (Գրիգոր) և զմակերպակիցսն նորա, օրհնեաց զնոսա... և եղ գԳրիգոր ամենեցու զլուս և ուսուցչից<sup>3</sup>։

Իր հոգեւոր եղբայրներն ալ ցանկացած են, որ ինք ըլլա Որոտնեցիի հաշորդի։ «Եւ յաջորդեաց յաթոռ սորա (Յովհաննու) քրիստո-

<sup>2</sup> Լ. Ս. Խաչկայան, «Ժե գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, Երևան, 1955, էջ 103—104։

<sup>3</sup> Քովմտ Մեծոփեցի, «Պատմութիւն», էջ 33։

սածաւալ աշրիդն և անմուտ արեգակն՝ երկրորդ լուսաւորիչն Գրիգորիոս վարդապետն Տաթևացի հաւանութեաբ և կամօք մեծ վարդապետին Սարգսի... և համշիրակ և եղբարցիրոց՝ Ցակորայ Սաղմոսավանիցն Արարատեան գաւառին և Գէորգայ Երզնկացոյ, և ամենայն աշակերտաց ջնդին» և ուրիշներու:

Տաթևացի Ապրակոնյաց վանք մեծ մեծ հողակ հանեց և դարձավ «վարդապետն ամենայն հայոց, երկրորդ լուսաւորիչն և աստուածաբանն», «գերի ի վերոյ գոլով ամենայն իմաստասիրաց և վարդապետաց հնոց և նորոց»<sup>4</sup>:

Սակայն Տաթևացի երկար չի մնար Ապրակոնիսի մեջ, սովոր և նյութականի պակասը կստիպեն զինք ևս, որ իր աշակերտներով հեռանա Աստապատեն Տաթև 1390 թվականին, ուր շարունակեց իր ուսուցչական գործունեությունը՝ մինչև 1408 թվականը:

Գրիգոր Տաթևացին հմուտ էր լատիներեն լեզվին և լատին աստվածաբաններու ևսկոլաստիկ ոճին»: Ա. Գրոց և աստվածաբանական գիտությանց կողքին հմուտ էր նաև հունաց արտաքին փիլիսոփայական դրաբոցներուն և աշխարհիկ գիտություններուն: Ան իր դարաշրջանի նշանավոր գիտնականներեն մեկն է, ըլլալով ճշմարիտ հոգեւորական և աստվածաբան: Իր աշակերտները զինք հետեւալ մակդիրներով կոչած են «... մեծ և անուանի քաջ հոնքոր, բարունապետաց բարունապետն, և վարդապետաց վարդապետն... որ եղան երկրորդ լուսաւորիշ ազգին Հայոց, և իրեն զարեցակն ի միջորէի պայծառացեալ լուսաւորեաց զեկեղիս Հայաստանեաց»<sup>5</sup>:

1390-ին վերջ, երբ Տաթևացին Ապրակոնյաց վանքը թողլով, Տաթև հաստատվեցավ, Հայրենի գավառներեն բազմաթիվ աշակերտներ խմբվեցան Հոն, իրեն աշակերտեցան նաև Ուրոտնեցիի վերջին աշակերտները, որոնք են Մխիթար Տաթևացի, Հովհաննես Հերմոնեցի, Գալուստ Վաղանդեցի, Սիմեոն Սյունեցի, Հակոբ Բոստացի, Գրիգոր Ալբարատեցի, Գրիգոր Զուլայեցի, Ավետիս Աստապատեցի, Եղիս Ոծովեցի, Հովհաննես Վաղանդեցի, Յովհան Շամախեցի, Յովհաննես Կապանցի մականվանյալ Կարմիր, Մատթեոս Ովստեցի, Մկրտիչ Փայտակարանցի և Ստեփանոս Թավրիզեցի<sup>6</sup>:

Տաթևի դպրոցը իր օրով ծաղկման գագաթնակետին հասավ և շրջան մը գիտու-

թյան ծարավ և հոգեւոր կյանքի գոհացում ու հանույթ առթող վայրը Տաթևի վանքը եղավ, Հովհանն Որոտնեցիի և Գրիգոր Տաթևացիի վարդապետարանը: Ամեն կողմէ գունդունդ ուսումնածարավ աշակերտներ կիությին Տաթև, կլուալվորվեհին հոգվով և մտքով, լույսովը մեծ վարդապետին քաղցրական վարդապետության, ողի առաքելանման բղիքը զջնորհս: Հոգոյն Աստուծոյ, և նա թեքեալ շարժէր զլեզու նորա առ ի վարդապետել զրանն ճշմարտութեան»: Ժամանակակիցներեն մեկը հետեւալ պատկերով կնկարագոր անոնց գնացքը: Վերածվում էին հորդ գետերի ու հոսում կեպի Տաթևացի<sup>7</sup>:

Հու է որ մեծ մանկավարժը կերտեց իր նախանձելի համբավը պատկառազդու հեղինակությամբ: Ունեցավ 80-ի մոտ աշակերտներ, վարդապետ, քահանա, կրոնավոր և սարկավագ, եկած Սյունիքի զանազան կողմերեն, ինչպես նաև Եկեղյաց, Արարատյան, Զուլայի, Աստապատի, Շամախի, Կապանի, Գանձասարի, Փայտակարանի, Թավրիզի և Արձենի կողմերեն, որոնց մեծ եռանդրվ կուսուցաներ շուրջ 20 երկար տարիներ, 1390—1409 թվականներուն: Այս աշխատանքը կըներ այնպիսի ատեն մը, երբ ոռչ գոյլ անդորրութիւն և ոչ հանգիստ խաղութեան: Հաճախ Տաթևացի, աշակերտներու գլուխը անցած, զաղթած է ապահով վայրեր: «Բոնաւորն Յուսուփ, տէրն Թավրիզու, էտո զիրոտն ի Սմբատայ իշխանն, վասն բարեխօսութեան նոցա եկն: և նա ոչ լուալ աղաշանաց վարդապետի»: Կարա-Կոյունլու Յուսուփն է, որ Լենկթիմուրի մահեն ետք վերականգնած էր իր տերությունը 1405—1420: Տաթևացի, ստիպված, հալածական կիախչի Արձեն:

Այժմ տեսնենք Տաթևի դպրոցի մեջ ավանդված կրթական ծրագիրն ու ուսման մեղողները:

Կրթական ծրագիրը և ուսման մերունեցը: — Անվարան Օրբելյանի նման պիտի կրկնեինք նույն դրվասական խոսքերը Տաթևացիի օրով ևս: «Եւ էր այնուհետև տեսանել զտունն զայն իրը մայրաքաղաք բազմաժողով, քանզի և շինհալ կայր բազմութիւն երդոց և ամբոխութիւն իրեն հազար արանց, որոց մշտաշան աղօթքն բարձրացեալ էր առաջի Աստուծոյ, և կայր կանգուն յերկրէ յերկինս իրեն սին հրեղէն»<sup>8</sup>:

<sup>4</sup> Թովմա Մեծոփեցի, «Պատմութիւն», էջ 50:

<sup>5</sup> Խորայր եպիսկոպոս Պողարյան, «Ճուցակ ձեռքբաց», Դ հատ., Երուսաղեմ, 1956, էջ 112—113:

<sup>6</sup> Թովմա Մեծոփեցի, «Պատմութիւն», էջ 50:

<sup>7</sup> Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 3276, էջ 27ա և 136բ:

<sup>8</sup> Սահմանու Օրբելյան, «Պատմութիւն Տաթևացին», Հատ. Բ, էջ 56:

**Տաթևի դպրեվանքը եղավ այս մեծ հաստատությունը, «որ լուսատրեաց զազգս մեր ճշմարիտ և ուղղափառ դաւանութեամբ և ճաւատով»<sup>9</sup>, Դարեր շարունակ պահեց, պահուած և զարգացուց հայ մշակությունը: Հայ մշակութիւն և արվեստի կրթության կազմակերպման գործի մեջ շատ մեծ դեր ունեցավ Որոտնեցիի և Տաթևացիի անզուզական դպրոցը:**

Գրիգոր Տաթևացիի օրով առավել ևս պայծառացավ Տաթևի դպրոցը: Ան հմուտ էր չին եկեղեցական և հայկական գրականություններուն, ուսումնասիրած էր Հունական փիլիսոփաններու գործերը, ինչ որ Արևմուտքի մեջ և կընեին, ծանոթ էր ունիթոռներու մեջ ընդունված գրականության: Գիտեր նաև լատիներեն լեզուն: Դպրոցին մեջ կսորվեցներ հայոց գրականությունը, Հին և նոր Կտակարաններու մեկնությունը, սուրբ հայրերու գրվածքները, «զԳիրս արտաքին իմաստասիրացն», «լուծմունք արտաքին գրոց», որ Պատառնի, Արիստոտելի, Փիլոնի և Պորֆիրի գրվածքներն ու անոնց բացատրություններն են: Այս նյութերեն զատ կվարժեցներ նաև երաժշտություն, ճառասացություն և գրչության արվեստները:

Երևանի Մատենադարանի ձեռագիրներեն թիվ 7823-են քաղլած հետևյալ հատվածեն հայոտնվի, որ Տաթևի համալսարանը ուներ երեք ուսումնարաններ, «ի միումն ուսուցանէր զնախկին երգիչ վարդապետաց զերաժշտութիւնս՝ քաղցրալուկ ձայնի հղանակաւ, մինչև անգամ յամենայն երկրէ և ի քաղաքաց եկեալ պարապէին առ ոտս նորաւել ի միումն՝ նկարագրութիւն պատկերահանութեան և զանազան նկարչութիւնս: Եւ ի միումն՝ զներքին և զարտաքին գրեանս ի մասնաւորի՝ զշին և զնոր Կտակարանս, ներքին և արտաքին մեկնութեամբ և թարգմանութեամբ»<sup>10</sup>:

Ահա թե ի՞նչ կգրե այդ մասին Ա. Խ. Մովսիսյան. «Երեք ուսումնարանները Տաթևի համալսարանի երեք ֆակուլտետներն են: Ինչպես մենք տեղեկանում ենք վերոհիշյալ հիշատակարաններից, այդ ուսումնարաններում դասսավանդվող առարկաները Մյունյաց դպրոցին ծանոթ, այդ դպրոցի սիրված ու փայտայլած գիտություններն են եղել: Ինչպես տեսանք, առաջին ուսումնարանում էին նախկին երգիչների երաժշտությունը, ուրեմն և տեսությունը,

և երգեցողություն, այս արվեստը այնքան էր մշակված Տաթևի բարձր դպրոցում, որ երկրի բոլոր կողմերից՝ գյուղերից ու քաղաքներից գալիս էին այնտեղ երաժշտական կրթություն ստանալու: Անշուշտ, այստեղ մեծ տեղ էր տրվում եկեղեցական երաժշտությանը:

Երկրորդ ուսումնարանում ուսուցանում էին «զանազան նկարչութիւնն», դիմանկարչություն, տեսարանների (պեյզաժ) նկարահանություն, մանրանկարչություն, ծաղկանկարչություն, գրքերի գեղարվեստական ձևավորումը, ծաղկազարդումը, նաև գրչության արվեստը՝ գեղագրությունը, որ այս դպրոցի ամենասիրելի առարկաներից մեկն էր:

Երրորդ ուսումնարանում ուսումնասիրում էին գլխավորապես հումանիտար, հասարակական գիտությունները, ինչ որ այդ ժամանակ կոչվում էր արտաքին գիտություն, որի մեջ մտնում էին փիլիսոփայությունը, ճարտասանությունը, քերականությունը, պոետիկան, տրամաբանությունը, դաստիարակությունը կամ մանկավարժությունը: Այստեղ էին ուսուցանվում նաև ներքին գիտություններ՝ մայրենի լեզուն, գրականությունը, պատմությունը, տնտեսությունը և այլն: Ինչպես տեսանք, այս ուսումնարանում ուսուցանվում էին Հին և Նոր Կտակարանները, կրոնական գրքերը, ապա անտիկ աշխարհի մի շարք փիլիսոփաների աշխատրվյունները, հատկապես Արիստոտելի, Փիլոնի, Պորֆիրի և այլն, սրանց աշխատությունների մեկնություններն ու թարգմանությունները: Այս ուսումնարանում ուսումնասիրվում էին բնական մի շարք գիտություններ, հատկապես մարդարակագմություն, տարրաբանություն (քիմիա) աշխարհագրություն, աստղաբաշխություն, ապա տոմարագիտություն և թվարանություն»<sup>11</sup>:

Տաթևի դպրոցի դասընթացքներու կից ամենաանհրաժեշտ առարկաներն մեկն ալ գրչության արվեստի ուսուցումն էր: Հիշատակարաններեն քաղլած բազմաթիվ հիշատակություններ կան, որոնք կիաստեն, թե Գրիգոր Տաթևացին, գրչության արվեստին նկատմամբ, հմուտ գիտնական մըն է: Գեղեցկագիր մեկը եղած է, մանավանդ հոգ տարած է գեղեցիկ և ուղիղ գրելու, անսիալ և ճիշտ գծագրելու, գիրերը համաշափ պահելու, ճարտարորեն սղագրելու, կըրճատելու և տողադարձելու մեջ: Բազմաթիվ գրիշներ հիացմունքով ու պարծանքով կիսու-

9 Թովմա Մեծոփեցի, «Պատմութիւն», էջ 33:

10 Ա. Խ. Մովսիսյան, «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության», Երևան, 1958 թ., էջ 132.

11 Ա. Խ. Մովսիսյան, Հիշված աշխատությունը, էջ 132—133:

սին իր մասին և իրենք զիրենք «անարժան» և «համբակ» կնկատեն: Անոնցմե մեկը այսպիս կգրե: «Գեղեցկայարմար դրուատով ունէր յինքեան զամենայն արուեստ զրութեան, քանզի զարդարեալ էր սա ի մեծ վարժապետէն Գրիգորի...»<sup>12:</sup>

Գրիգոր Տաթևացին իր ուսուցչին՝ Հովհան Որոտնեցիի նման մասնավոր խնամք կտաներ Միջին զարու հայ բարձրագույն զպրոցներու մեջ ամենաշատ սիրված այս ճուղին վրա ինք իր կրթական գործունեության շըրջանին հասցուցած էր հարյուրավոր գրիշներ, գրագիրներ և գրչության արվեստի մեջ անմրցելի վարպետներ:

Գրչության արվեստի մեջ նշանավոր կդառնա Գրիգոր Խլաթեցի Ծերենցը (1350—1425), որ «Տիւ և գիշեր գիրս գրէր, և զամենայն աղքատս կերակրէր և զամենայն վարդապետս և կարգաւորս ի նոյն յորդորէր... և յիսոն ամ գիրս գրեաց տիւ և գիշեր անհանգիստ տքնութեամբ»<sup>13:</sup>

Գրիգոր Խլաթեցի է նաև գրող, «Թագում երգս գանձուց և տաղից յիշատակ թողեալ ինքեան»: Գրած է բազմաթիվ թուղթեր՝ ուղղված զանազան մարդոց: Անոնցմե կմնա «Եիշատակարան աղէտից», որ ոտանավորով հորինված պատմություն մըն է, Հայաստանի 1386—1422 տարիներուն պատահած թշվառություններուն նկարագրականը, որոնց ինք ականատես եղած է: «Ճերից ժամանակաց պատմութիւնս ի լոյս ածէր ի հարցանելն և ի պատասխանատուութիւնս, և զգիրս սրբոց մարտիրոսաց և զվկայիցն, որ կոչի Յայսմաւորց՝ սակաւարան և անվթար շարադրեալ ի սրբոց հնոց և նորոց վարդապետացն՝ ի լոյս էտօ»: Իր կազմած «Յայսմաւորք»-ի մեջ ան ավելցուցած է փրեն ժամանակակից նահատակներու պատմությունը: Ինքն ալ 1425-ին շարշարվելով նահատակլած է թզնոնյաց զավարի Ցիպինա վանքին մեջ, քուրդ ցեղապետի մը ձեռքով:

Գրչության արվեստի կողին զարգացավ մանրանկարչությունն ալ, ԺԴ դարու առաջին կեսի նշանավոր մանրանկարիչներն են Թորոս Տարոնեցին (Մշեցի) և Ավագը: Երկուքն ալ Գրիգորի սաներ են: Իսկ նույն շըրջանին Կիլիկոն նշանավոր նկարիչներն էին Թորոս Ռոսլին և Սարգիս Պիծակի:

Գույնզգույն, թանկարժեք ներկերով անոնք ինկարեին ծաղկածե, թռչնածե, ձկնածե և կենդանածե գլխատաներ: Մքանչելի նկարներով կարդարեին ամբողջ էշերն ու լուսանցքները: Մանրանկարներու նյութը զլիա-

վորապես բուսական և կենդանական աշխարհն ու երկրաշափական զարդերը կհանդիսանային, ինչպես նաև սուրբի պատկերներն ու կրոնական տեսարանները:

ԺԴ դարու երկրորդ կեսին և ԺԵ դարուն զպալիորեն կնվազի զըզության արվեստը, իր բավանդակությամբ արժատական փոփոխություններ կլին, կրոնական հոգեոր շարժառիթները (տօֆի) իրենց տեղը աստիճանաբար կդիշին աշխարհիկ կյանքի շարժառիթներուն նկարներու մեջ ավելի հաճախ տեղ կպավեն աշխարհականներու, իշխաններու, ուամիկներու, նկարիչներու, բժիշկներու, արհեստավորներու, վարդապետներու, ձկնորսներու, հովիվներու և այլ աշխատանքային տեսարաններ ցուցանշող պատկերներ:

Տաթևացիի ձեռնարկներու արդյունավորության մեջ երկու գլխավոր կետեր նկատողության արժանի են: Առաջինը՝ իր ուսումնական ծրագիրը, որ հետեւյալն էր. ա) ներքին ուսմունք. բ) արտաքին ուսմունք. գ) քարոզի և բեմբասացության վարդություն. դ) ընափիր գրչագրության և առատ ընդօրինակության զարկ տալ. ե) կուսակրոն և ամունացյալ եկեղեցականներուն տալ՝ հավասարապես եկեղեցվո պաշտոններին պահանջված ուսումը: Իսկ երկրորդը՝ պայքարի մարդը, ավանդապահ հայոց գիտության, հարատեսող և նվիրյալ եկեղեցական: Իր քեռորդին Առաքել Սյունեցի կլին. «Գրիգորիու» վաճառական անդին մարգարտին, որ զամենայն անցաւոր և զսնոտի՝ դիրագին վաճառեաց և առ ուշինչ համարեցաւ, և միայն զմարդարիտն Քրիստոս առ ինքն ընկուլաւ:

Տաթևացին վանական է, գործիչ, նկարիչ, բիմբասաց, փիլիսոփա, վերլուծող, բանասեր, հեղինակ և լեզվագետ:

Տաթևացիի հետ զպրոցի վերելքի համար աշխատեցան Հովհաննես, Գրիգոր, Առաքի, Սարգիս, Բարսեղ, Կերիոն, Ծերուն, Կիրակոս, Հովսեփ, Հակոբ, Վարդան, Գևորգ, Մատթեոս և այլ հեղինակավոր դեմքեր, որոնք նախկին սաներն էին Տաթևի բարձր դպրոցին, որոնք հետապային դարձան պաշտոնակիցները մեծ վարդապետին:

Ասոնք հասցուցին գիտակից և ուսաւ վարդապետներու փաղանգ մը, որոնք գացին տարածելու Ավետարանի լույսն ու նախնաց ոգին հայ ժողովուրդի մեջ:

Թարեկարգի հոգևորականը. — Տաթևացին ու միայն զըզով ու քարոզություններով մեծ ծառայություններ մատուցած է Հայաստանյաց եկեղեցվույն, անոր դավանությունն ու ավանդությունները պաշտպանելով, այլ նաև բարեկարգություններ ներմուծած է: Վար-

12. Անայան, «Հայոց անձնանունների բառարան», Հատ. Ա, էջ 808:

13 Թովմա Մեծափեցի, «Պատմութիւն», էջ 35:

դապետական մասնավոր իշխանության և ծայրագույն վարդապետության կանոնը Գրիգոր Տաթևացիին կպարտի Հայաստան-յայց նկեղեցին: Ահա թե ինչ գիտակցություն ունեցած է ան Հայ Եկեղեցու բեմի մասին: Սյունյաց դպրոցին մեջ արդեն շատ դժվար էր բեմ գրավել երկար աշխատություն և փորձեր պետք էին քարոզելու իրավունք ձեռք բերելու համար: Տաթևացի Սյունյաց դպրոցի այս ավանդությունները կարգի կանոնի վերածեց և ավանդեց մեր Եկեղեցին: Իր այս արժանիքը բավ է Գրիգոր Տաթևացիին տալու համար մեծ վարդապետներու շարքին մեջ կարևոր տեղ մը:

Սովորություն է վարդապետական վկայարաններու մեջ հիշել իրարմի գավազան ստացողներու շարքը: Վերջին դարերու վկայարաններ միշտ նախ Գրիգոր Տաթևացիի անոնց կդրեին, և անոր աշակերտներին զանազան ճյուղեր կկազմվեն: «Նախ՝ Գրիգոր Տաթևացին, նորին աշակերտ Դանիել, նորին՝ Յովհաննէս Համշչնցին, նորին՝ Չորդան Գրիգոր Արծիշեցին, նորին՝ Ներսէս, որ Մատափ ասի. նորին՝ Ներսէս Բաղդիշեցին, նորին՝ Ներսէս Ամկեցին. նորին՝ Բրգուտ Յովհաննէս Ոստանցին. նորին՝ Բարսեղ Գաւառցին... սորին աշակերտ Մոկացի Ներսէս ի գեղջէն Ասկնչասայ, զորոյ մակ անուն Բեղլու ասեն, զի մեծ էր բեղն: Սորին աշակերտ Մելքոնէթ Երևանցի, ի գեղջէն՝ որում անուն էր Վժան»<sup>14</sup>:

Անոնց հաջորդող բոլոր վարդապետները Գրիգոր Տաթևացիի հարազատ ու բարոյական սերունդը կնկատվին:

Տաթևացին իր բազմազբաղ վիճակին մեջ առիթ ունեցավ վարչական դորժերու ալ միշտամուելու: Աղթամարի կաթողիկոսական վեճերու մեջ, ժե դարուն ճիշտ սկիզբները, Տաթևացի իր աշակերտներով, որոնց թիվը 90-ի հասած էր, երբ Մեծովի կզոնվեր, դիմում նոյալ իրեն, որ առաջը առնե պատահար-ներուն և վերջ մը տա երկապուակությանց: Տաթևացի Մեծովա վանքի առաջնորդ Հովհաննես վարդապետի հետ ժողով գումարեց և Աղթամարի կաթողիկոսության դերը վերջացած նկատեց: Թիմականներու փափան ալ այս էր: Հակոբ Կաթողիկոսին տեղեկագրվեցավ այս կարգադրությունը, որ իր հավանությունը տվավ ու կոնդակով մը վավերացուց, բայց այս բոլոր ջանքերը ի դեր եւան:

Մեծ ուսուցիչը. — Գրիգոր Տաթևացի գրեթե իր ամրող կյանքը ուսանելով և ուսու-

ցանելով անցուց: Քարոզելու և վարդապետելու իշխանությունը Որոտնեցին առնելով, անոր մահեն ետք, 1386-ին, առաջնորդ կարգվեցավ Տաթևի վանքին: Նախքան պաշտոնը ստանձնելը, երկու տարի (1388—1390), Ապրակունիսի վարժարանին մեջ պաշտոնավարեց, ապա անցավ Տաթև (1340—1408), ուր երկար տարիներ մնաց առաջնորդության պաշտոնին մեջ, ունեցավ բազմաթիվ աշակերտներ, որոնց մեջ կհիշվին տասնհինգեր ավելի անվանի վարդապետներ: Ասոնց մեջ նշանավոր է Մխիթար Տաթևացի, որ հիշատակարաններու մեջ մեծ բարունապետ կոչումով կհիշվի հաճախ (1406—1426): Տասներկու ուրիշ աշակերտներ ալ Մեծովին կուգան, որոնց մեջ Թովմա՝ Լենկթիմուրի արշավանքներուն անվանի պատմիշը և վաթսուն այլ քահանաներ:

1406-ին, երբ վասպուրականցիները Տաթև կուգան ու կլսեն Տաթևացին, կիհանան անոր առատահոս և պերճախոս դասախոսությանց վրա: Մեծովիցին կդրե. «ապշեցոց զամեննեսին առաւել քան դիմաստունս հելլենացւոց»<sup>15</sup>:

1407-ին հիշված է որպես տեղապահ և թոռոսոյ Միւնեաց:

1408-ին հսկեր «յաթոռ վարդապետական և աթոռակալովթեան Միւնեաց վիճակիս»:

Թոնակալ Յուսուփի ժամանակ, երբ վերջինս մեծ սուլրին բարեխոսությունը նկատի չշնունար, ոի հալածմանէ անօրինաց», առնելով իր աշակերտները մոտ ութսուն հոգի, պահ մը կիսորհի երուաղեմ երթալ, առանձնանալով այս աշխարհեն և հոն ողաս ասել», բայց չկարենալով իրագործել իր ծրագրը, կտեղափոխվի Արքեց՝ Մեծովիա վանքը, 1409-ին, ուր Հովհաննես Մեծովիցին փութաց Տաթևացիի ընդունելության, «և զնացեալ զէմ ընդ առաջ հոգւոր ծնողին իւրոյ, և բերեալ յանապատն իւր հանգույց զնա»: Այդ տարին Տիրուհի Սուլր Կուսին Տաճարի շինությունը ավարտելով, նավակատիքի հանդիսությանց իր ալ մասնակցությունը կրերե: Իր Քարոզագրին մեջ Հայաստանը նվաճողներուն կնմանցնե փուշերով ամրացուցած ցանկապատի մը, որ կպատսպարե ու կպաշտպանե այժին, այսինքն՝ Քրիստոնեական Եկեղեցին: Կքարոզե հնազանդիլ տիրողներուն, որովհետև շայմ քրիստոնեալոյ ի ներքոյ բռնաւոր իշխանաց խաղաղութեամբ ունին գիւղեանց եկեղեցականութիւնն»<sup>16</sup>:

Տարի մը Մեծովիա վանքի մեջ իր աշակերտներուն կուտացան և ողամբերութիւն

15 Թովմա Մեծովիցի, «Պատմութիւն», էջ 51:

16 Գրիգոր Տաթևացի, «Գիրք քարոզութեան որ կում Ամարան հատոր», Կոստանդնուպոլիս, 1741, էջ 452:

14 Առաքել Դաւթիթեցի, «Պատմութիւն», Վաղարշապատ, 1896, էջ 391.

բազ նահատակին Յոփայ, և գդիրս գրչութեան Արիստակիսի և Մեծին Գէորգայ, և զՍովը Աւետարանն Յովհաննու»:

Հովհակավոր վարդապետի դասախոսությունները այնքան անվանի էին, որ Գրիգոր Խաթեցի լնայելով իր անցած տարիքին, մոտ վաթունամյա հասակին, Արծենի վանքեն գալով մինչև Մեծոփ, ունկնդիր կը լլար գիտնական վարդապետի դասախոսություններուն:

Մեծոփիցին շատ հետաքրքրական տեղեկություն մը կուտա, թէ իր աշակերտները (Տաթևի), «գաղտագողի կառնեն զինք» Մեծոփի վանքեն ու կիսացնեն Արարատյան գալառ, «առ մեծ վարդապետն Յակոբ Սաղմոսավանից՝ հոգեոր հարազատ իր: Եւ մեք ամենիցին վարդապետք և աշակերտք զնացաք առ նա», ուստի վանահայրը՝ Հովհաննես՝ բայց շեն հաջողիր վերադարձնել, Խոսքը Մեծոփիցին տանք.

«Եւ եհաս մինչ ի յայն տեղի, որ ասէ՝ Յառաջազոյն քան զտօն ջատկին: Եւ եկեալ սիրելի աշակերտք նորա՝ գողացան զնա ի գիշերի: Եւ մեք եկեալ զնացաք զինի նորա՝ հանդերձ վարդապետաւք և եպիսկոպոսաւք և զրոց աշակերտաւք, և հասար նմա յերկիրն Արարատեան, լալավ, ողբով, արտասուօք, աղիողորմ կոծանօք, և ոչ կարացաք զարձուցանել զնա: Եւ անդ ետ մեզ հրաման վարդապետութեան»<sup>17</sup>:

Բարձի Կենտրոնական գրադարանի հայկական բաժնի թիվ 1 ձեռագրի միջին մասը, որուն բովանդակությունը Գրիգոր Տաթևացիի Քարոզագիրքն է, քարոզներէն մեկուն վերջավորության գրիշ՝ Մկրտիչ, հետեւյալ անթվական հիշտակությունը թողած է<sup>18</sup>. «Ի մեջեկի ժե մեծ բարունապետն (խոսքը, անշուշտ, Տաթևացիի մասին է), ի սովոր ուխտէս Մեծոփու կու տանէին ի Տաթէն, և մեծ տրտմութիւնը եհաս մեծի և փոքր, այլ ողորմութիւնն Աստուծոյ եհաս յօդնութիւն, Յոհանէս վարդապետն երեր զբերդաւագն և քրիստոնիայ տանուտաերքն ամենայն և արգելեց, և եղան ուրախութիւն մեծ վարդապետաց և աշակերտաց ամեննեցուն: Յիշման արժանի առնէք զուտանուն Մկրտիչ»<sup>19</sup>: Հայտնի չէ, թէ Տաթևացին ո՞քան կմնա Սաղմոսավանքին մեջ: Իր աշակերտներն ու քեռորդին՝ Առաքել Սյունեցին կուգան ու զինք կտանին Տաթէն, ուր երկար չապրիր, դեպքեն 36 օր հետո հիվանդանալով կվախճանի, 1409 դեկտեմբեր 27-ին, անմխիթար սուգ ձգելով Հայ Ազգին վրա: Հստ ոմանց հայտնած տեղեկու-

թյանց՝ ան վախճանած է Հայոց ՊԵԹ թվին, այսինքն 1410-ին: Հակասություն չկա, տարին հունվար 1-են սկսելու պարագային 1409-ին կհանդիպի, իսկ ըստ հայկական տոմարի օգոստոսի 11-են սկսելու պարագային՝ 1410-ին կզուգագիպի:

Մատթեոս վարդապետ, Գրիգոր Տաթևացիի մահվան և ռշաքատանի կոտորածի և գերեվարության ատեն, կարգածած է դամբանական մր, որ հետեւյալ խորագիրը ունի. «Նորին Մատթէոսի վարդապետի ներբողեան ողբերգաբար, ոգեալ ի թաղումն երջանիկ բարունապետին Գրիգորի: Ընդ նմին յիշատակեալ զողըս լալեաց կոտորածին, որ ի Վրացուում ի Փայտակարան քաղաքի, քանզի պատկեր աւորց ի մի գիպեցաւ»<sup>20</sup>:

Ստորև քաղվածաբար կմեջբերենք հատված մը այդ զամբանականին. «Եւ արդ, ուստի ներբողեցից զքեզ ճառս ողբերգական, — ավաղում է նա դիմելով իր հանգուցյալ ուսուցչին, — քանզի թէ ընթանամ ի հրապարակս կիելցույն՝ ու գտանիմ զքեզ. և ի ժողովս բարի արանց, ուր հանապազ նստէիր՝ նոյնական և անդ ոչ երկիս. իսկ թէ ի զահոյս թագուրական շտապեցայց, ուր հանապազ կանխէիր՝ և անդ ևս խնդրեն զքեզ. իսկ թէ ի բնակութիւն ձեր ընթացայց՝ առ ընտանիս և նիրելիսն՝ և նոքա թերեւս ողբան զքեզ. իսկ թէ զմայր քո հարցանեմ՝ ի յողբարյն ոչ կարէ պատախանել ինձ. և թէ ի գրկեցութեանն քննեցից զքեզ՝ և նոքա յուգոց հանեն. իոկ թէ յուսումնակիցսն քո ժպրհիմ՝ և նոքա ի սուգ են անհնարին վասն քոյին տեսութեան դրկելոյն... իսկ թէ զդասս զրոց աշակերտացն հարցանեմ՝ նոքա իբր զմոլի եղեալ են անտէրունց շրջելով ի մացառուտ վալրս փշոց, որք աւելի ինչ ոչ գտանին, բայց միայն զխոցուածս հոգոց: Վասն որոյ ի միտ աժեալ ոչ ուրէք երկիք աստ՝ յայսմ աշխարհիս, բայց միայն առ տենչալին ձեր Քրիստոս» (էջ 271բ—272ա):

Գովասան Մհարուպ վարդապետ այսպիս կշափաբառն:

«Զբան ոգեշահ իբրև արձան մեզ թողեր, Կրկին տասամբ և քառ թրով կազմեցեր, Ուկի պսակ գլխոյ տոհմին մեր եղեր»:

Ուրեմն Հովհան Որոտնեցի վարդապետի մահեն վերց գրած է 24 գրեր: Միայն «Մեկնութիւն կամ լուծմունք զրոց ինչ Արիստոսկելի»-ն 1383-ին գրած էր:

Գիտնական վարդապետը, որքան հսկա իր իմացականությամբ և բազմարդյուն իր գրական գործունեությամբ, այնքան համեստ է իր նկարագրությունը: Որոտան կամ Գլածոր գտնը վող ձեռագրի մը մեզ ինքն հետեւյալը կգրե.

17 Լ. Ս. Խաչիկյան, հիշված աշխատաթյունը, էջ 101:

18 Հավանաբար 1409-ին գրված:

19 Լ. Ս. Խաչիկյան, հիշված աշխատաթյունը, էջ 94:

20 Անդ, էջ 119:

«Արդ, ես թմբրամածն Գրիգոր, վերջինս ի ծնունդս Եկեղեցւոյ, և տրուաս բանին ի սպասաւորաց, սիրով միայն զանուն ստացայ, չանին ի գործն ոչ մխեցայ, յերես անկեալ աշաղեմ զպատահաւոսդ այսմ գծից յիշել բարի լիշմամբ զմեղ առաջի Քրիստոսի, զի որպէս և որլափ յիշէքդ, բազմապատիք և ձեղ յիշեսցի. ամէն»:

Ուրիշ մը սակայն իր մասին կգրե. «Առ ոտս երջանիկ և երիցս երանեալ բազմերախտ հօրս մեր և երկրորդ արփիտատորդի Հայկացիան սեռի Գրիգոր քաջ հուստորի և աստուածաբան վարդապետի, զոր այս խառն և խաւար ժամանակի իրու զարեղակն ի միջօրէի պայծառացեալ լուսաւորէ զեկեղեցի, ոչ ունելով հանգիստ մտաց և ոչ մարմնոյ. քանզի հանէ զգիշերն ի բում<sup>21</sup> յաղօթս Աստուծոյ ի յարտասուս բազմահու. և լնու զկարոտութիւն բազմութեան եղբարցս, որ առ ոտս սորա են ժողովեալ, այլ և զրոլորս ազգիս, միշտ գնալով ի մեջ այլազգեաց՝ մեծամեծաց և փոքոնց, զի ոչ գոյ իշխան և առաջնորդ բաց ի սմանէ»:

Տաճարի երկու դռներեն մեկուն առջև թաղած են Գրիգոր Տաթեացին և ավելի ուշ այդ գերեզմանին վրա տաճարածե, սպիտակ քարերով, շինած՝ դամբարանու. Հատակը ծածկը վագած է խոշոր սալաքարերով, իսկ ներսի մասին բոլոր որմերը նկարազարդելու համար ծեփված է կրաշաղախով:

Առաքել Սյունեցի սրահի կամարներուն վրա արձանագրեր է. «Կամաւան Աստուծոյ ես Առաքել Սիւնեաց եպիսկ. կանգնեցի լիմաշ»

<sup>21</sup> Ընդօրինակողը շփոթ գրած է՝ «ըզմին ի տունս».

ի փրկութիւն» հոգո(<sup>1</sup>) մեծ հռետորին և բարունապետին Գրիգորի, թվ. ՊՄԹ (1410), իսկ 1787-ին Տաթեակ առաջնորդներեն Տեր Հռվակիմ, ոհ Մղուկ գաւառէ, յԱնդեղակոթ գեղչէ», մեծ վարդապետի գերեզմանին վրա, իրեն վայել մաքուր տաշած քարով, դամբարան մի շինել կուտա. «Սա շորս վիճաքարս կանգնել ետ ի սուլք աթոռս, զերկուան ի մէջ տաճարին, առընթեր երկուց սեանց, զմին ի վերայ դամբարանի եօթնալոյս վարդապետի Սրբոյն Գրիգորի Տաթեացւոյ, զարդարուն խաշիւք քանդակեալ ի քարանց, և հոյսկապ յօրինուածով կոփածոյ քարամբք գեղեցկատես մատուր իմն շինեալ, և զմիւն ի մէջ ժամատանն»<sup>22</sup>. Վերջին երկրաշարժը որահին հետ փլատակ դարձնցած է նաև մեծ վարդապետին դամբարանին վրա կառուցված սիրուն մատուրը:

Ու մինչև այսօր ովհատավորներ կերթան, կայցելեն եռամեծ վարդապետին մատուր շիրիմը. մոմ կվառեն ու խունկ կծխեն, անոր սրբազնն նշխարքը պարունակող ու մատուր քը պարփակող նվիրական շիրիմին: Ովհատավորներ երկյուղածորեն կծնրադրեն ու կհամբուրեն սուրբ քարը: Ու երբ ասոնք կծգեն ու կհեռանան դամբարաննեն, եռամեծ վարդապետի հոգին, պլալացող մոմին նշուլին ներքե ու անուշահուտ խունկին վերածխության մեջ, կհրճվի անասելի բերկրանքով մը:

<sup>22</sup> Ստեփանոս Օրբելեան, «Պատմութիւն տանն Սիսկան», Բ հատ., էջ 285—286:

(Շարունակելի)